Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 29-ի N 129- Ա
որոշման

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

«Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ենջարանային մասնաշենքի մասնակի վերանորոգում»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է հիմնանորոգել «Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ենջարանային մասնաշենքի 3-րդ հարկը և արհեստագործական մասնաշենքի համար կառուցել նոր արտաքին կոյուղագիծ, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ կրթահամալիրի 250 սաների ուսուցումը և գիշերակացը կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	Հայ օգնության Ֆոնդ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, քաղ. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ քաղ. Երևան, Ռաֆֆու փողոց, N 113 շենք Բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 158,588.79 (հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր ութսունութ ԱՄՆ-ի դոլար յոթանասունինները ցենտին) համարժեք դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ ապրիլի 1, 2019 թ. Ավարտը՝ օգոստոսի 30, 2019 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել կրթահամալիրի ենջարանային մասնաշենքի 3-րդ հարկը և արհեստագործական մասնաշենքի համար կառու-

		ցել նոր արտաքին կոյուղագիծ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 158,588.79 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Իրականացվելիք շինարարական վերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալները ներկայացված են պայմանագրին կից հավելվածում: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ ապրիլի 1, 2019 թ. - օգոստոսի 30, 2019 թ.:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 158,588.79 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, պայմանագիր՝ կնքված 04.03.2019 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, քաղ. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, քաղ. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց 4, ՀՎՀՀ 06901369) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ